Կ Ա Ր Ծ Ի Ք

Վարդուհի Վրույրի Սիմոնյանի «ՀՀ հասարակական- քաղաքական կյանքը 1991-2001 թթ.» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Վարդուհի Վրույրի Սիմոնյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է այժմեական հրատապ նշանակություն ունեցող այնպիսի թեմայի, որի ճանաչողական, գիտատեսական և գործնական հետազոտությունը անխուսափելի է ոչ միայն ներկա պատմափուլում ՀՀ հասարակական- քաղաքական իրողությունների անաչառ գնահատման, այլև դրանց ակնբախ, իսկ երբեմն էլ անտեսանելի պատճառահետևանքային կապերի բացահայտման տեսանկյուններից: Չնայած խնդրո առարկա հիմնախնդիրը անցած տասնամյակներում տարբեր ասպեկտներով հետազոտվել է մի շարք ոլորտների մասնագետների կողմից, այդուամենայնիվ, Վ.Սիմոնյանի հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը ոչ միայն գալիս է լրացնելու արվածը, այլև կարևորվում է պատմության նոր շրջափուլում նոր մոտեցումներով լուսաբանելու և ՀՀ հասարակական-քաղաքական կյանքի ոչ հեռավոր անցյալի պատմությունը վերարժևորելու տեսանկյունից:

Ատենախոսության հեղինակին իրապես հաջողվել է նորովի և քննական վերլուծության միջոցով արժևորել և ՀՀ 1991-2001 թթ. հասարակական-քաղաքական կյանքի փորձը մատուցել ներկա իրողությունների վերաիմաստավորման ետնախորքի վրա:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից՝ կազմելով 231 տպագիր էջ:

Հետազոտության ներածության մեջ հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, ատենախոսության նպատակը, դրանից բխող խնդիրներն ու գիտագործնական կարևորությունը: Ներածականում պատշաճ տեղ է գտել թեմայի վերաբերյալ ստեղծված բազմաոատ գրականության ներկայացումը:

Ատենախոսությունում շահեկանորեն պահպանված է առաջադրված խնդիրների, բուն տեքստում դրանց լուծումների և շարադրանքի բովանդակությունից բխող տրամաբանական եզրակացությունների գիտաչափորոշային կապը: Ատենախոսը հիմնախնդիրը դիտարկել է համակարգված ամբողջության մեջ՝ գիտական շրջանառության մեջ դնելով տարաբնույթ

նորահայտ փաստաթղթեր, պատմագիտական փաստառատ նյութեր, դրանք լուսաբանել է համադրական, քննական-վերլուծական մեթոդներով:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է ՀՀ հասարակական-քաղաքական կյանքին 1991-1996 թթ.: Հիշյալ գլխի չորս ենթագլուխներում ներկայացված են ՀՀ անկախության հռչակագիրը, Հայաստանի Երրորդ հանրապետության հռչակումը և կառավարման նոր համակարգի ձևավորումը, ժողովրդավարացման գործընթացը և բազմակուսակցական համակարգի ստեղծումը, բարեփոխումների ընթացքը, շեշտադրելով ՀՀ առաջին Սահմանադրության ընդունումը և առաջին նախագահական ընտրությունները: Հեղինակը բավականին հանգամանալից անդրադառնում է ՀՀ անկախության հռչակագրի մշակման, դրա տարբերակների բովանդակային քննարկմանը քաղաքական տարբեր ուժերի մոտեցումներին և ընդունման գործընթացին: Հեղինակի չափազանց բարձր գնահատանքը ՀՀ անկախության հռչակագիրին՝ իբրև պատմական փաստաթղթի հանրապետության հռչակման և անկախության վերականգնման գործում արժանացել է ամբողջ աշխատանքի շարադրանքում տարբեր առիթներով մի քանի անգամ կրկնվելուն: Հեղինակը բավարար չափով արծարծել է Հայոց ցեղասպանության և հայդատականության խնդիրները, ինչպես նաև քաղաքական ուժերի տարակարծություններն ու մոտեցումները հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ:

Առաջին գլխում ատենախոսն անդրադարձել է նաև ՀՀ պետական խորհրդանիշների ընդունմանը, իշխանության նոր մարմինների ձևավորմանը: Ժողովրդավարացման և բազմակուսակցական համակարգի ձևավորման համատեքստում հեղինակն՝ ի մասնավորի ներկայացրել է ՀՀՇ-ՀՅԴ հակամարտությունը, հատկանշվել է եկեղեցու և ՁԼՄ-ների նկատմամբ քաղաքական նոր ուժի վերաբերմունքը: Աշխատանքի առաջին գլուխը ատենախոսը եզրափակել է ՀՀ հասարակական-քաղաքական կյանքում բարեփոխումների, Սահմանադրության նկատմամբ քաղաքական ուժերի տարակարծությունների և բովանդակային քննարկումների լուսաբանմամբ:

Ատենախոսության՝ երեք ենթագլուխներից բաղկացած երկրորդ գլխում հեղինակը լուսաբանել է ՀՀ հասարակական-քաղաքական զարգացումները 1996-2001 թթ.: Այն ամբողջացնում է նշված ժամանակահատվածում հասարակական կազմակերպությունների և կուսակցությունների գործունեության, ՀՀ քաղաքական ճգնաժամի խորացման, 1998 թ. իշխանափոխության և 1998-2001 թ. հասարակական-քաղաքական նոր զարգացումների պատմությունը: Առաջին գլխում անդրադառնալով ավանդական կուսակցությունների վերադարձին, ատենախոսը երկրորդ գլխում դարձյալ կրկնում է այդ մասին: Քննության առնելով ՀՀ քաղաքական ճգնաժամի խորացման և 1998 թ. իշխանափոխության հարցերը,

իրավամբ ճիշտ է նկատում ճգնաժամի դրդապատճառները՝ ամենաթողության մթնոլորտը, ոչ կանոնակարգ տնտեսական հարաբերությունների պայմաններում ստվերային տնտեսության ընդլայնումը, իշխանության թուլացումը, 1996թ. նախագահական ընտրությունները: Ատենախոսն անդրադարձել է նաև Լ. Տեր-Պետրոսյանի ծրագրային հոդվածներին և դրանց նշանակությանը:

Հեղինակի կողմից գիտական շրջանառության մեջ դրված նորահայտ արխիվային փաստաթղթերը և նյութերը հնարավորություն են ընձեռել առավել մանրազնին և խորությամբ ներկայացնել ՀՀ քաղաքական ճգնաժամի խորացումն ու 1998 թ. իշխանափոխությունը, ինչպես նաև անդրադառնալ 1998 թ. նախագահական և 1999 թ. ԱԺ ընտրություններին:

Եզրակացության մեջ հեղինակը կատարել է փաստարկված, հիմնավոր հետևություններ ու ինքնատիպ ընդհարացումներ:

Արժանին մատուցելով ատենախոսի հետազոտական ունակություններին ու կատարած ծավալուն աշխատանքին նշենք, որ աշխատանքում առկա են որոշ թերություններ, բացթողումներ, վիճելի մոտեցումներ:

1.Աշխատանքի ներածականում թեմայի հոտազոտման մեթոդն ու մեթոդաբանությունը հստակ տարանջատված չեն: Մեթոդը հետազոտական աշխատանքի իրականացման ձևն է, եղանակը, իսկ մեթոդաբանությունը աշխատանքի հայեցակարգային տեսական հիմքն է: Ավելորդ չէ նկատել, որ նմանօրինակ մոտեցումը հիմնականում նկատելի է բոլոր ատենախոսություններում:

2.Քանի որ աշխատանքը նվիրված է ՀՀ հասարակական-քաղաքական կյանքի վերլուծությանը, ուստի այն ավելի կշահեր, եթե հեղինակը բացի ՀՀ ժողովրդավարացման, հասարակական կամակերպությունների, կուսակցությունների առաջացման, նրանց գործունեության գնահատման, կառավարման նոր համակարգի ձևավորման համատեքստում անդրադառնար նաև տնտեսական ոչ լեգիտիմ հարաբերությունների հիմքի վրա հասարակության ծայրահեղ բևեռացման, բարեփոխումների նկատմամբ սոցիալական նոր շերտերի ու խավերի վերաբերմունքի, հասարակական միջավայրում անտարբերության և անհանդուրժողականության, առօրեականության նոր ընկալումների ձևավորման հարցերին:

3. Ցանկալի կլիներ, որ ատենախոսը, հասարակական-քաղաքական կյանքի զարգացման անխզելի շղթային լծորդելով, վեր հաներ սոցիալական նոր տարածության մեջ մշակութային և սոցիալական կապիտալների համահարաբերակցության խնդիրը և դրանց վրա հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների ազդեցության հանգամանքները:

4. Համոզիչ չէ աշխատանքի Անկախության հռչակագրի վերջնական անվանման հարցի շուրջ քննարկվող տարբերակների առնչությամբ հեղինակի այն պնդումը, որ դա «վկայում էր ժողովրդավարական արժեհամակարգի առաջին քայլերի կայացվածության մասին» (էջ 39): Մանավանդ, որ հեղինակը ինքն իրեն հակասում է նույն տեղում գրելով, որ «հանրապետությունում իշխանությունը դեռ նոր ստանձնած ՀՀՇ-ն... ոչ մի կերպ մտադիր չէր այլ քաղաքական ուժեր տեսնել ՀՀ իշխանության բոլոր, և մասնավորապես բարձրագույն օղակներում...»: Իշխանությունների նմանօրինակ դիրքորոշման պարագայում խոսել ժողովրդավարական արժեհամակարգի կայացվածության մասին, կարծում ենք տեղին չէ:

Աշխատանքում տեղ են գտել նաև տեխնիկական թերություններ.

1. Անփույթ է կազմված գրականության ցանկը, որոշ հեղինակների ինիցիալները բացակայում են:

2.Շարադրանքում առկա են մի շարք անհարկի կրկնություններ, երկարաշունչ նախադասություններ, անհասկանալի մտքեր (էջ 92), որոնք անհրաժեշտ է խմբագրել:

2.Աշխատանքը զերծ չէ ոճական և տառասխալներից (էջ 10, 14, 78,79, 85,88):

Արված դիտողությունները, ցանկություններն ու նկատառումները չեն նսեմացնում ատենախոսի կատարած ծավալուն և դրվատելի հետազոտության արժեքը:

Վարդուհի Վրույրի Սիմոնյանի «ՀՀ հասարակական- քաղաքական կյանքը 1991-2001 թթ.» թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին և հեղինակն արժանի է իր հայցած Է.00.01-«Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Էդուարդ Զոհրաբյան

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.թ., դոցենտ Էդուարդ Զոհրաբյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ Մ.Վ. Հովհաննիսյան

«19» 12. 2023 թ.